ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«06» 06 2016թ.
ԴԱՏԵՎ-ԱԿ-356

«ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» Հ/Կ
ՆԱԽԱԳԱՀ Լ. ԴՈՅԴՈՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Դոյդոյան

ՀՀ պաշտպանության նախարարին հասցեագրված Ձեր՝ 17.05.2016թ. 283-ի 2 գրության կապակցությամբ տեղեկացնում ենք.

ՀՀ պաշտպանության նախարարությունում էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության Mulberry համակարգ ներդրված չէ՝ հաշվի առնելով պաշտպանական գերատեսչության գործունեության առանձնահատկությունը տեղեկատվական անվտանգության ապահովման տեսանկյունից: Միևնույն ժամանակ հայտնում ենք, որ մինչև ՀՀ կառավարության 15.10.2015թ. թիվ 1204-Ն որոշման ընդունումը ՀՀ պաշտպանության նախարարությունում հարցումներին պատասխանելու գործընթացը կանոնակարգվում էր ՀՀ ՊՆ 14.08.2015թ. թիվ 931 հրամանով: «ՀՀ պաշտպանության նախարարություն և զինված ուժերի գլխավոր շտաբ ուղարկված հարցումները դասակարգելու և դրանց պատասխանելու գործընթացը կանոնակարգելու մասին» ՀՀ պաշտպանության նախարարի 26.05.2016թ. թիվ 511 հրամանով հարցումներին պատասխանելու գործընթացը համապատասխանեցվել է ՀՀ կառավարության վերոնշյալ որոշման պահանջներին:

Ըստ այդմ՝ ՀՀ պաշտպանության նախարարությունում ստացվող հարցումները՝ այդ թվում նաև ՊՆ Տ և ՀԿ վարչության կողմից սպասարկվող modpress@mil.am և press@mil.am էլեկտրոնային հասցեներով ստացվողները, համապատասխան գրանցամատյաններում մուտքագրվելուց հետո ուղարկվում են հարցմանն առնչվող ոլորտի համար պատասխանատու ՊՆ, ԶՈՒ և ԶՈՒ ԳՇ ստորաբաժանումներ՝ դրանց պատասխանների նախագծերը կազմելու համար: Հարցումների պատասխանները հասցեատերերին ուղարկվում են ՀՀ ՊՆ աշխատակազմի միջոցով:

ՀՀ ՊՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Կատարող՝ Մ. Աղեկյան
Հեռ.՝ 010 29-46-38

ք.Երևան, 0044, Բագրևանդի 5, Հեռ.(+374) 10 29-44-01, Ֆաքս (+374) 10 29-43-12